



**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱԶԱՐՈՒՄ
ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱԾՆԻ ՏՈՆԻՆ**

Էջմիածնի:

Հունիսի 8-ը, կիրակի, «տօն կաթողիկէ Ս.

Ամառային վառ ու պայծառ օրերից մեկը։
Մայր Աթոռ ուխտի է եկել հավատացյալների խոսն բազմություն։ Ուրախ ու տոնական դողանքում են Մայր Աթոռի զանգերը։ Ամեն կողմ տոնական հանդիսություն և տրամադրություն։

Առավտոյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով Վեհարանից առաջնորդվում է Մայր Տաճարը՝ Ս. Էջմիածնի տոնի օրը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցելու։

Սկսվում է հայրապետական սուրբ պատարագը։ Վեհափառ Հայրապետին սպասարկում են սրբազններ, վարդապետներ և սարկավագներ։ Հանդիսավոր ու դաշն երգվում է Ծկմալյան պատարագը Մայր Աթոռի երգչախմբի կողմից։

Մայր Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, պատոնական անձնավորություններ, Հյուրեր, որոնց թվում ուկտավորաբար Մայր Աթոռում գտնվող տեր և տիկին Սուրբն և Շաքէ Գալենաերյանները, Հարվըրտ համալսարանի պրոֆեսոր Ա. Սահնձյանը և ուրիշներ։

«Հայր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը։

«Յանուն Հօր և Որդու, և Հոգուն Արքոյ, ամէն»։

«Ողջոյն տուի միմանց ի համրոյ որբորեան»։

Սիրելի՝ հավատացյալներ։

Այսօր մեր Ս. Եկեղեցվոր մեծ տոներին մեկն է, որ կիառավորենք այս բազմադայն Ս. Տաճարին մեջ։ Այսօր տոնն է Ս. Էջմիածնի հիմնադրության։ Այսօր, մեր հավատացյալ ժողովուրդը ցնծուրյամբ կտոնի Մայր Արքոյ Ս. Էջմիածնի հիմնադրության տարեդարձը։ 1650 տարի է անցած այն օրն, երբ այսեղ, Արարատյան դաշտի կուրծքին վրա, իջավ երեղեն կերպարանքով ինքը՝ Տերն մեր Հիսուս Քրիստոս և իր Ուկի Ուռով բախեց Երկիրը՝ հիմք դնելով այս Մայր Տաճարին, որ այս հրաշալի դեպքեն հետո կոչվեցավ Ս. Էջմիածնի։ Մեր շաքանանները հոգեզմայլ կերպով կերգեն փառքը այս մեծ տոնին՝ «Էջ Միածնեն ի Հօրէ և լոյս փառաց ընդ հմա...»։ Այս՝ Ս. Էջմիածնի հավատի սյուն է, Ս. Էջմիածնի լուսն Խորան է, Ս. Էջմիածնի փրկուրյան հանապարհ է և հավիտենական կյանքի աղբյուր։

Մեր բոլոր երանաշնորհ հայրապետները, սերունդի սերունդ, և մեր բանաստեղծները երեկ և այսօր գովեք կերգեն, փառքը կերգեն Ս. Էջմիածնի։

Հրաշալի է Ս. Էջմիածնի հիմնադրության պատմությունը, հերոսական է Ս. Էջմիածնի պատմությունը և փառավոր է այդ պատմությունը։

Հրաշալի են այն պարագաները, որով Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Գ-ի օրերուն, Պարտի սկզբին, հիմնվեցավ Մայր Արք Ս. էջմիածինը:

Հայ ժողովուրդը, Ս. էջմիածնի հիմնադրության առաջին խնդիրն ու միաբր կապեց ընթափությունը նոր ուստին՝ Քրիստոսի Ավետարանին են և նոր հավատքի լույսով ոփեշչված, նոր արժեքներ ստեղծեց ազգային ինքնուրույն դրաշմով:

Հայ ժողովուրդը իր հոգին զարդարեց Ժմաստովը Անեղին», նոր կյանք և նոր ձև տալով այդ իմաստին:

Հայ ժողովուրդի Քրիստոնյա դառնալը մեծ նապատ մը եղավ ամրող Քրիստոնյա աշխարհի հաղբանակին ի խնդիր: Բայց հաղորդյան օրերուն հաջորդեցին փորորկալից օրեր, երբ Ս. էջմիածինը, իր ծենքը առած ինքնապաշտպանուրյան դրոշը, իր զավակներու հանատակուրյան զեռվ պաշտպանեց իր նոր հավատքը, իր եկեղեցին և իր Հայրենի Հողը: Մեր խոսքը կիերաբերի Վարդանաց հերոսամարտին: Բայց նաև այնունեան, դարերու ընթացքին, Ս. էջմիածինը օրինեց և հանախ զիխավարեց հայ ժողովուրդի պատագական մաքառումները՝ միշտ «վասն հաւատոց և վասն Հայրենինաց»:

Այսօր, մեր Մայր Հայրենիքին հովանինին ներքին, կապրի ու կիառազդիմն Ս. էջմիածինը, մեր վերածնած հայ ժողովուրդի ծոցին մեջ: Բարի են ժամանակները և խոստումնալից:

Այսօր հայ ժողովուրդը վերաշինուրյան և վերելի ուղիի վրա է և լուսավոր է մեր պատագան: Այլևս վերջ գտած են տիսուր անցյալի բոլոր տեսակի դժվարուրյունները: Խաղաղություն կտրիր այսօր մեր փոքրիկ, բայց նվաճումներով մեծ Հայրենիքին մեջ: Մեր եկեղեցին ալ անմասն չէ այս ընդհանուր վերածնունդներ և շինարար հանազընթացքներ:

Այսօր, ավելի բան ուրիշ օրեր, Մենք վրատան ենք, քեզ համայն հայ ժողովուրդի աշերը սկսուած են դեպի այս Ս. Տանարը Սիածնակը: Անոնց հոգին մեջ հավատքի, սիրու և հավատարմուրյան լույս մը կիառագայրէ: Մենք, իրեւ Հավապետ, մեծապես միխրարված ենք մեր ժողովուրդի դեպի այս սուրբ հաստատուրյունը և Հայրենի Հողը ունեցած հավատարմուրյամբ:

Թող Աստված, որ հիմնեց այս Ս. Տանարը, պահե, պահպան մեզ բոլոր անփորձ և անխոռով: Թող Տերը Մեր պահերուիս ուղի-

ները ոգեշնչե այն վառ հույսով, որ երշանիկ օր մը անոնք բոլորը պիտի վերագանձնան Մայր Երկիր՝ համբուրելու հշման այս Ս. Սեղանը:

Մենք խոր հավատենով ու լավատեսությամբ կապատենք այդ երշանիկ և պատմական օրվան, երբ Աստված հայ վողովուրդի այս սուրբ իղձը իրականուրյուն պիտի դարձնե և Մենք բոլորս պիտի ապրինք իրեւ մե՛կ ժողովուրդ, իրեւ մե՛կ եկեղեցի, իրեւ մե՛կ հոմինին:

Սիրելի՝ ժողովուրդ, եկե՛ք, ձեր աղոքքը միացուցե՛ք Մեր աղոքքին և միաբեռ ողջունենք Ս. էջմիածնի այս սուրբ տոնը:

Ողջո՞ւն Ս. էջմիածնին, լույս Ս. էջմիածնին, փառք Ս. էջմիածնին այժմ և հավիտյանս, ամե՞ն:

Հավարտ սուրբը պատարագի, հշման, Ս. Մեղանի առաջ, Վեհափառ Հայրապետի հանդիսագրությամբ կատարվեց Մաղթանք Յ. էջմիածնի: Մայր Տաճարի կամարների տակ մի անգամ ևս հնչեց Ս. էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության անսասանության և Հավերդության նվիրված սուրբ աղոթքը՝ «Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս, պահեա զՄայր Արքոն մեր անարատ, անսամն և անաղօտ, ի պայծառութիւն եկեղեցեց մերց և մանկանցն սոցին մինչև ի կատարած աշխարհի»:

Եկեղեցական հանդիսությանց ավարտից հետո, Վեհափառ Հայրապետը մհծաշուք թափորով, Հավատացալ ժողովուրդի սրտասուի մաղթանքների և օրհնությունների տակ առաջնորդվում է Մաղկյա գահինք, որտեղ ընդունում է շնորհավորություններ Մայր Աթոռ Ս. էջմիածնի տոնի որպամ առիթով:

Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլորին, շնորհակալություն է հայտնում Մայր Աթոռի տոնի առթիվ արտահայտված անկեղծ բարեմաղթությունների համար և խանդակառ մթնոլորտի մեջ Ս. Գրիգոր Լուսավորչին կարգի աղամանդակուու շքանշան է հանձնում Մայր Աթոռի բարերար հալեպարնակ պր. Սուրբին Գալենտերյանին, որը խորապես հոգված հայրապետական այս բարձր գնահատությունից, արցունքով ծնկի է գալիս՝ ընդունելու պրազան նվիրա և Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Երեկոյան ժամը 4-ին Վեհարանում տրվեց պաշտոնական ճաշկերուկթ Մայր Աթոռի տո-

նի առթիվ։ Բաղմաթիվ հրավիրյաների թվումն էին նաև պըոֆ։ Սանցյանը և տեր և տիկին Սուրբն և Շաքե Գալինտերյանները։ Ավելի քան մտերմատկան ու շերմ մթնոլորտ էր ստեղծվել սեղանի շուրջ։ Մի անգամ ևս Ազգի սերը և Ս. Էջմիածնի խորհուրդը քովովի էին բերել բոլոր սրտերը։ Սրտասանվեցին բաժակաճառեր, եղան արտասանություններ, Հատկապես շերմ ճառեր արտասանեցին պրոֆ։ Սանցյանը և պր. Գալինտերյանը՝ Վեհափառ Հայրապետի անձի ու

գործի շերմ գնահատությամբ և խորին համակրանքով։

Ավելի քան երկու ժամ տևող այս հաճելի սեղանը քաղցր առիթ եղավ մի անգամ ևս ներշնչվելու Ս. Էջմիածնի անոնով և խորհրդուով և նրա արժանավոր Գահակալ նորին Ս. Օծություն Տ. Տ. Վաղգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի գործով, հայ ժողովունի և Հայրենիքի սիրով։

Սեղանը փակվեց Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով։



2101-ԱՀ